ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունվարի 2024 թ. N 1-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասով և Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու և Ջերմուկ համայնքի ղեկավարի 2016 թ. դեկտեմբերի 27-ի N 221-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 69-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի համաձայն՝ ***որոշում եմ***՝

1.Հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրենների 2024 թվականի ամենամյա արձակուրդների գրաֆիկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ

ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 3
Ջերմուկ

Հավելված

Ջերմուկ համայնքի ղեկավարի 2024 թ.
հունվարի 3-ի N 1-Ա որոշման

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿ

Հ/հ	Պաշտոն	Ազգանուն, անուն	Արձակուրդի ժամանակահատվածը	Օրերի քանակը
1	համայնքի ղեկավար	Արսենյան Վահագն	օգոստոս	24
2	համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ տեղակալ	Սարգսյան Վարդան	մայիս, սեպտեմբեր	24+24
3	համայնքի ղեկավարի տեղակալ	Խաչատրյան Աշոտ	հոկտեմբեր	24
5	համայնքի ղեկավարի խորհրդական	Հայրապետյան Արման	հուլիս, հոկտեմբեր	7+24
6	վարչական ղեկավար	Մկրտչյան Սևակ	հունիս	24
7	վարչական ղեկավար	Բագրատյան Արտակ	մարտ, նոյեմբեր	19+24
8	աշխատակազմի քարտուղար	Թադևոսյան Գոհար	ապրիլ, հոկտեմբեր	14+24
9	Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրմանի բաժնի պետ	Ղազարյան Արմինե	մայիս	24
10	«Զատիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն	Գայանե Կարապետյան	հունիս	25
11	«Ջերմուկի համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	Մանուկյան Գոհար	հուլիս	25
12	«Ջերմուկի համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	Արմեն Խուրշուդյան	հուլիս	25
13	«Ջերմուկի համայնքի ճոպանուղի» ՀՀ տնօրեն	Արմեն Թադևոսյան	հոկտեմբեր	24

14	«Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն	Գոռ Թադևոսյան	սեպտեմբեր	20
15	«Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն	Արտուշ Սիմոնյան	մայիս	20
16	«Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	Սաթենիկ Ներսիսյան	օգոստոս	25

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հունվարի 2024 թ. N 2-Ա

«ՀԷՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1 կետով, 98-րդ կետի 2-րդ պարբերությամբ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 98-Ն որոշման, հաշվի առնելով «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից լիազորված կազմակերպության դիմումը (մտից՝ 2024 թվականի հունվարի 3-ի N 2) ***որոշում եմ՝***

1. «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը՝ ի դեմս «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի, տալ շինարարության թույլտվություն Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի կուլտուրայի տան 0,4 կՎ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:

2. «ՀԷՑ» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 3000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ որպես շենքերի և շինությունների արդիականացման համար նախատեսված տուրք:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ Ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կապալառու և լիազորված «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունվարի 2024 թ. N 3-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 10-016-0293-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի հիման վրա, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Ջերմուկի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 84-Ա որոշման, հիմք ընդունելով հողամասը վարձակության իրավունքով տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 5-ի N 1 արձանագրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Հաստատել 2024 թվականի հունվարի 5-ին կայացած համայնքային սեփականություն համարվող, Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 1,31 (մեկ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0293-0006) վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթի հետևյալ արդյունքները՝

· *Մրցույթում հաղթող ճանաչել մրցույթի միակ մասնակից Ռաֆայել Հուսիկի Երանոսյանին:*

· *Վարձակալության իրավունքի ժամկետը՝ 05.01.2034 թ.:*

· *Վարձակալության իրավունքի տրամադրման տարեկան վարձավճարի չափը՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ է /վճարման հաշվեհամար՝ 900365031088/:*

· *Վարձակալության իրավունքի տրամադրման նպատակը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու՝ որպես արոտավայր օգտագործելու համար*

. *վարձակալին չի թույլատրվում առանց վարձատուի լրացուցիչ համաձայնության հողամասը տրամադրել ենթավարձակալության:*

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի տարածքի մաքրման և բարեկարգման պարտավորությունը կրում է վարձակալը:

3. Ռաֆայել Հուսիկի Երանոսյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր:

4. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռաֆայել Հուսիկի Երանոսյանի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունվարի 2024 թ. N 4-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԶԱՐԶԱՆԴ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ՝ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Զարզանդ Լուսեղենի Անդրեասյանի դիմումը (մտից՝ N 2203, 28.12.2023 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Զարզանդ Լուսեղենի Անդրեասյանին սեփականության իրավունքով պատկանող Գնդեվազ գյուղի 1-ին փողոցի վրա գտնվող անշարժ գույքին՝ բնակելի տանը, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, 1-ին փողոց, 2-րդ փակուղի N 3:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունվարի 2024 թ. N 5-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արթուր Նորայրի Սեդրակյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի N 1766)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 42,3 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 42,3 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 37,82 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20236CKVZK:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս N 22/30:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Արթուր Նորայրի Սեդրակյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 8
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2024 թ. N 6-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՆԴԵՎԱԶԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՀԵՏԱԳԱ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանի հավելվածի 86-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Հիմք ընդունելով ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիրը (Սերիա Ա N 0599, տրված՝ 13.10.2023թ.)՝ սահմանել, որ Ջերմուկ համայնքի «Գնդեվազի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սաթենիկ Զավենի Ներսիսյանը շարունակում է պաշտոնավարել 5 տարի ժամկետով՝ մինչև 13.10.2028 թվականը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանգամանքով պայմանավորված Սաթենիկ Զավենի Ներսիսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սաթենիկ Զավենի Ներսիսյանին որոշման ընդունման մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թ. N 7-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԻՍՐԱՅԵԼ ՕՐՈՒ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ և 18-րդ կետերին համապատասխան՝ հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Ա. Խ. Իխտիարյանի դիմումը (մտից N 112, 25.01.2021 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արմեն Խաչիկի Իխտիարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2003 թվականի հունվարի 27-ի N 959649 վկայական) Ջերմուկ քաղաքի Իսրայել Օրու փողոցի վրա գտնվող 500 քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 189,1 քմ ընդհանուր ներքին մակերեսով (ընդհանուր արտաքին մակերեսը՝ 214,5 քմ) հասարակական նշանակության շինությունները՝ ռեստորան և տաղավարներ (այսուհետ՝ շինություններ) համարել օրինական (ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023DRKET8) և տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Իսրայել Օրու փողոց N 5:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նված շինությունները պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահպանմամբ, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների օրինականացման համար հողամասի սեփականատերը պարտավոր է սույն որոշման ընդունման օրվանից 60

(վաթսուն) օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին մուծել 557 700 (հինգ հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր) դրամ, հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին՝ հողամասին և շինություններին հասցե տրամադրելու համար սեփականատերը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031112 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Խաչիկի Իխտիարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ

ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թ. N 8-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 239-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2023 թվականի մայիսի 3-ի N Կ–03052023-10-0040 որոշումը՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 23-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 239-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում «2023AGM4JA» ծածկագիրը փոխարինել «2023YDA3TT» ծածկագրով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թ. N 9-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արսեն Արևշատի Սահակյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի հունվարի 26-ի N 152)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 5-րդ փողոց N 3 հասցեում գտնվող շինությանը կից համայնքային սեփականություն հանդիսացող 58,6 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 58,6 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 43,24 քմ) հասարակական նշանակության տարածքի մասը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023MW7ZKF:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս 5-րդ փողոց N 4/1:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Արսեն Արևշատի Սահակյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատաս–խան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հունվարի 11
Ջերմուկ